

ժառիթը ժողովրդեան վիճակին վրայ տեղեկութիւն մը քաղել էր, և Հեղինէի ձեռք խաչի գիւտի մասին ակնարկութիւն մը չունի:

(3) Կիւրեղ Երուսաղէմացին՝ որ գրած է երախայական ընթերցուածքներ, կը յիշէ այն տեղը ուր մեր Տէրը խաչուած էր. և յիշուած գիւտէն վերջ ոչ աւելի քան քսան տարի, իրաչափայտի մասին ունի երեք ակնարկութիւններ (Դ. 10, Ժ. 19, ԺԳ. 4): Ամէնէն օրոշը գրուած է Ժ. 19, ուր ան կը նկարագրէ թէ «խաչը մինչև հիմակ կը տեսնուի մեր մէջ»(*):

Կիւրեղ խաչի երեւման առթիւ իր Կոստանդ կայսեր գրած նամակին մէջ որոշապէս կը գրէ թէ խաչը գտնուած էր իր հօրը՝ Կոստանդիանոսի օրով(**):

Կիւրեղ իր առաջին վկայութեան մէջ կ'ապացուցանէ որ իր օրը կը հաւատային թէ Տիրոջը իրական խաչափայտը գտնուած էր. բայց հաւատքի հոգը կը պակսէր: Ան երբ խաչին վերայ կը խօսի, չի յիշեր Հեղինէն: Այս երեք հին հեղինակութիւնները ցոյց չեն տար Հեղինէն իբր գտնողը խաչին:

Սիւլբիկոս Սեւերոս (395), Ամբրոսիոս (395), Ռուփինոս (400), Կիւրեղ Աղեքսանդրացի (420), Սոկրատ (430), Սոզոմենոս (430), Թէոփորէտ (448), Տուրացի Գրիգոր (595). ասոնք են հիններէն զլխաւոր հեղինակները որ բաւական մանրամասն կը պատմեն խաչի գիւտը Հեղինէի ձեռքով, ասոնցմէ ոմանք կը յիշեն թէ խաչին հետ գտնուած են նաև խաչին բեռները եւ Պիղատոսի տախտակը: Կիւրեղ Աղեքսանդրացիին սակայն, յատկանշական պարագայ մը կը հաղորդէ մեզ Զաֆարիա մարգարէին մեկնութեան մեջ, ըսելով թէ խաչափայտը տարբեր ժամանակներու մէջ գտնուած է խաչին վրայ գամուած բեռներով(***):

(*) Հայերէն թարգմանութիւն կը գրէ.

«Վկայէ եւ փայտ խաչին մինչեւ ցայսօր առ մեզ երեւեալ, եւ ի բազում հաւատացեալք միւռեալ սոսի ընդ ամենայն տիեզերս (Ժ. Գիրք): «Եւ փայտն խաչի աղ ամենայն տիեզերք լցեալ իսկ են»:

(**) «Քանզի առ աստուածասիրաւն և առ երջանիկն յիշատակաւ Կոստանդեաւ հարբէն քով՝ փրկական փայտ խաչին՝ յերուսաղէմ եղև գտեալ յաստուածայնոցն շնորհաց. այնմ՝ որ զգեղեցիկն խնդրեաց զբարեպաշտութիւն, զծածկելոցն սուրբ Տեղիքս մատուցին զգիւտ»:

(Տե՛ս, ձառոց.)

(***) Կիւրեղ Աղեքսանդրացիին այս բացատրութեան վերաբերմամբ Դաւիթ Անյաղթի Բարձրագուցեաց խաչի ճառին մեկնիչը կը յիշատակէ